https://doi.org/10.46991/hc.2025.22.2.030

The Maturation of the Idea of Autonomy for Western Armenia (1876–1878)

Samvel Poghosyan
https://orcid.org/0000-0003-2478-1860
Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan, Chair of the History of Armenia, Professor, Doctor of Historical Sciences
poghosyansamvel@yahoo.com

Emma Boyajyan
https://orcid.org/0009-0002-9888-1661
Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan, 4th-year student
emma.boyajyan04@gmail.com

Keywords: Western Armenia, Ottoman Empire, Balkan Crisis, Armenian autonomy, Russo-Turkish War of 1877–1878, Treaty of San Stefano, Treaty of *Berlin.*

The aspirations of the Western Armenians prior to 1876 were limited solely to requests and demands for basic civil rights. However, the Balkan Crisis of 1876–1878 initiated a change in Armenian political thought. The defeat of the Ottomans in the Russo-Turkish War of 1877–1878 created favorable conditions for Western Armenians to gain autonomy. In order to secure the future of their people, the Armenian leadership drew up various programs, seeking to gain the favor of Great Britain, Russia, and the sultan to make these plans a reality. Petitions for moderate reforms in Armenia were transformed into the idea of autonomy during this period, and in some cases, the concept of independence was even discussed.

However, neither the Ottoman, Russian, nor British authorities were interested in satisfying Armenian demands, and the treaties of San Stefano and Berlin did not even mention an autonomous Armenia. Nevertheless, the Balkan Crisis of 1876–1878, the Russo-Turkish War, the discussions surrounding the Eastern Question with the participation of the great powers, and the internationalization of the Armenian Question played an important role in the evolution of Armenian political thought. While the Armenian elite had previously sought to ensure civil rights for the population in Western Armenia, this new situation elevated the establishment of an Armenian autonomy to a primary goal, which was envisioned as a stepping stone to future independence. This transformation of political thinking heralded a new era, the ultimate goal of which was the creation of an independent Armenia.

History and Culture Vol.-22(2), 2025, pp. 30-46

Received: 18.09.2025
Revised: 05.10.2025
Accepted: 27.11.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարի հասունացումը 1876-1878 թթ.[1]

Սամվել Պողոսյան
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր

Էմմա Բոյաջյան
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 4-րդ կուրսի ուսանող

Հիմնաբառեր ՝Արևմտյան Հայաստան, Օսմանյան կայսրություն, Բալկանյան ճգնաժամ, Հայաստանի ինքնավարություն, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմ, Սան Ստեֆանոյի պայմանագիր, Բեռլինի պայմանագիր։

Արևմտահայության ձգտումները մինչև 1876 թ. սահմանափակվում էին միայն քաղաքացիական տարրական իրավունքներ ստանալու խնդրանք-պահանջներով: Սակայն 1876-1878 թթ. Բալկանյան ճգնաժամը փոփոխություն մտցրեց հայ քաղաքական մտքի մեջ: Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմում թուրքերի պարտությունը արևմտահայության համար բարենպաստ պայմաններ ստեղծեց ինքնավարություն ձեռք բերելու համար: Արևմտահայության ապագան ապահովելու համար հայ ղեկավար շրջանակները տարբեր ծրագրեր էին կազմում, փորձում էին ստանալ Անգլիայի, Ռուսաստանի, սուլթանի բարեհաճությունը՝ դրանք իրականություն դարձնելու համար: Հայաստանում չափավոր բարեփոխումներ անելու խնդրագրերը այս շրջանում վերափոխվեցին ինքնավարության գաղափարի, իսկ որոշ դեպքերում նույնիսկ սկսեց արծարծվել անկախության գաղափարը:

Ո՛չ թուրքական, ո՛չ ռուսական կամ բրիտանական իշխանությունները, սակայն, շահագրգռված չէին հայկական պահանջների բավարարման հարցում, և Սան Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրում Հայաստանի ինքնավարության մասին նույնիսկ խոսք չկար: 1876-1878 թթ. Բալկանյան ճգնաժամը, ռուս-թուրքական պատերազմը և միջազգային խոշոր դերակատարների մասնակցությամբ Արևելյան հարցի քննարկումներն ու Հայկական հարցի միջազգայնացումը կարևոր դեր ունեցան հայ քաղաքական մտքի փոփոխության ու զարգացման գործում: Եթե նախկինում հայկական վերնախավը ձգտում էր Արևմտյան Հայաստանում քաղաքացիական իրավունքներ ապահովել հայ բնակչության համար, ապա նոր իրավիճակում գլխավոր խնդիրներից մեկը հռչակվեց հայկական ինքնավարության ստեղծումը, որը ապագայում տանելու էր դեպի անկախություն: Հայկական գաղափարական ու քաղաքական մտածելակերպի փոխակերպումը

[1]***Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Գիտական ծրագիր № 25RG-6A004)***:

The Maturation of the Idea of Autonomy for Western Armenia (1876–1878)

Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարի հասունացումը 1876-1878 թթ.

ազդարարեց նոր դարաշրջան, որի վերջնական արդյունքը պետք է լիներ անկախ Հայաստանի ստեղծումը:

Созревание идеи автономии Западной Армении в 1876-1878 гг.

Самвел Погосян

Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, кафедры истории Армении, профессор, доктор исторических наук.

Эмма Бояджян

Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, студент 4-го курса

Ключевые слова: Западная Армения, Османская империя, Балканский кризис, Армянская автономия, Русско-турецкая война 1877-1878 гг., Сан-Стефанский мирный договор, Берлинский трактат.

До 1876 года стремления западных армян ограничивались лишь просьбами и требованиями предоставления им основных гражданских прав. Однако Балканский кризис 1876–1878 годов привёл к изменению армянской политической мысли. Поражение турок в русско-турецкой войне 1877–1878 годов создало благоприятные условия для обретения западными армянами автономии. Чтобы обеспечить будущее западных армян, армянское руководство разрабатывало различные программы, пытаясь добиться благосклонности Англии, России и султана для их реализации. В этот период петиции об умеренных реформах в Армении трансформировались в идею автономии, а в некоторых случаях даже стала обсуждаться идея независимости.

Однако ни турецкие, ни российские, ни британские власти не были заинтересованы в удовлетворении армянских требований, а в Сан-Стефанском и Берлинском договорах автономия Армении даже не упоминалась. Балканский кризис 1876–1878 годов, Русско-турецкая война, обсуждение Восточного вопроса с участием крупных международных акторов и интернационализация Армянского вопроса сыграли важную роль в изменении и развитии армянской политической мысли. Если ранее армянская элита стремилась к обеспечению гражданских прав армянского населения Западной Армении, то в новой ситуации одной из главных задач было объявлено создание армянской автономии, которая в перспективе должна была привести к независимости. Трансформация армянской идейно-политической мысли ознаменовала новую эпоху, конечным результатом которой должно было стать создание независимой Армении.

* * *

Ներածություն: Հայկական պետականության կորստից հետո հայ քաղաքական միտքը երբեք չի հրաժարվել անկախության գաղափարից: Սակայն XIX դարում ստեղծվել էր նոր իրավիճակ. ռուսական, թուրքական ու պարսկական պետությունների միջև մասնատված Հայաստանի անկախացումը թվում էր գրեթե անհնար: Չպետք է մոռանանք, որ աշխարհի զգալի մասն այդ

ժամանակաշրջանում գաղութացված էր մի քանի գերտերությունների կողմից, և փոքր ազգերի անկախության ձգտումները արյան մեջ խեղդվում էին այդ տերությունների համատեղ ջանքերով: Նման պայմաններում օսմանյան լծի տակ կեղեքվող հայության ձգտումները սահմանափակվում էին միայն չափավոր բարեփոխումների՝ քաղաքացիական տարրական իրավունքներ ստանալու խնդրանք-պահանջներով: Սակայն 1876-1878 թթ. Բալկանյան ճգնաժամը հանգեցրեց Օսմանյան պետության մասնակի անդամահատմանն ու նոր պետությունների ստեղծմանը: Դա փոփոխություն մտցրեց հայ քաղաքական մտքի մեջ: Կրկին արդիական դարձավ Հայաստանի ինքնավարության կամ անկախության գաղափարը: Գիտական գրականության մեջ ոչ բավարար չափով է ուշադրություն դարձվել ինքնավարության գաղափարի սկզբնավորման ու արծարծման ակունքներին: Հոդվածում փորձ է արվել լրացնելու այդ բացը, ուսումնասիրելու ու լուսաբանելու հայ քաղաքական մտքի զարգացումներն ու դրանց պատճառները: Սկզբնաղբյուրների, գիտական գրականության, հուշագրությունների, ժամանակի մամուլի ուսումնասիրության ու վերլուծության միջոցով փորձ ենք արել ներկայացնելու հայ քաղաքական մտածելակերպում տեղի ունեցած գաղափարական փոխակերպումները՝ բարենորոգումների պահանջից դեպի ինքնավարության ու անկախության հասնելու ձգտումների առաջացումն ու ամրապնդումը:

Հայերի վիճակը Օսմանյան պետությունում: Դեռևս 1869 թ. Էրզրումի բրիտանական հյուպատոս Ջ. Թեյլորն իր կառավարությանն ուղարկած զեկուցագրում նշում էր. «Ամէն տեղ, այս գաւառներուն մէջ, Հայերը դառն կերպով կը գանգատէին թուրք կառավարութեան դէմ եւ միեւնոյն ժամանակ անչափ կը գովէին Ռուսաստանը, բացէ ի բաց յայտնելով, թէ որոշեր էին այնտեղ գաղթել: Այս սխալ մտածումը հետեւանք է իրենց եկեղեցականներու մշտական դրդումին, բայց պէտք է խոստովանիլ, որ Հայերը դժգոհութեան համար լիուլի պատճառներ ունին, որոնք են՝ թուրք կառավարութեան իսկապէս վարչական յոռի սիստէմը, տուրքերու անհաւասար բաշխումը, անոնց՝ ինչպէս նաեւ տասանորդի՝ չափազանց անկարգ հաւաքումը, արդարութեան կատարեալ բացակայութիւնը, անընդհատ կատարուող զեղծումներն ու քրիստոնեաներուն՝ իսլամներու հետ հաւասար նկատուելու մասին պահանջման բացարձակօրէն անգործադրելի մնալը» [Լազեան, 1946, 52]: Ապա նա իր զեկուցագրում շարունակում է. «Հայերը իրենց թուով, դիրքով եւ զբաղումներով ամենէն ազդեցիկ դասակարգն են այստեղ. եւ որովհետեւ ներկայ պարագաներուն մէջ ռուսական շահերու տեսակէտէն այս զգացմունքը նպաստաւոր է, հետեւաբար նա վտանգաւոր է այս պետութեան (Թուրքիոյ) համար: Այս թշնամական զգացումին դէմ ազդու կերպով դարման տանիլը թուրք կառավարութենէն կախուած է: Եթէ ան արմատական միջոցներ ձեռք առնելով զոհացնէ ժողովուրդը, զայն հարստահարողները խստօրէն եւ անկողմնակալօրէն պատժէ, տասանորդի եւ այլ տուրքերու հաւաքման ու գանձման սիստէմը կարգի բերէ եւ իրօք գործադրէ այն բազմաթիւ ֆէրմանները, որոնք հանուած են ի նպաստ քրիստոնեաներու, ես վստահ եմ, որ տիրող դժգոհութիւնը կը վերանայ եւ իր հպատակներուն մէջ հաւատարմութեան զգացումը կը հաստատուի եւ հետզհետէ կ'ամրանայ: Այլապէս անոնք, հարկադրուած, կը մղուին ծայրայեղութեան եւ՝ ուշ կամ կանուխ՝ կամ գաղթականութեան կը դիմեն կամ բացարձակ ապստամբութեան…» [Լազեան, 1946, 53-54]:

Ինչպես տեսնում ենք, բրիտանացի հյուպատոսը նկարագրում է արևմտահայերի համար ստեղծված չափազանց ծանր վիճակը, որը նրանց մղում էր դեպի ռուսական կողմնորոշում: Նրա կարծիքով դա կարող էր Օսմանյան կայսրության համար ունենալ վտանգավոր հետևանքներ, որից խուսափելու միջոց համարում էր օրինականության ու արդարության հաստատումը Հայաստա-

նում: Սակայն թուրքական իշխանությունների մտքով անգամ չէր անցնում բարելավել հպատակ քրիստոնյաների վիճակը և կարգի հրավիրել մահմեդական պաշտոնյաներին ու ցեղապետերին:

Եվրոպական տերությունների հարկադրանքի արդյունքում ընդունված 1839 ու 1856 թթ. բարենորոգումների սուլթանական հրովարտակները, որոնցով քրիստոնյաներին հավասար իրավունքներ էին խոստանում կայսրությունում, ոչ միայն մնացել էին թղթի վրա, այլև ավելի էին գրգռել մահմեդականներին: Սովորական երևույթ էին դարձել հայերի մասնակի կոտորածները: Այդ ամենի հետևանքով Արևմտյան Հայաստանում հայերի թիվը տարեցտարի կրճատվում էր, իսկ եկվոր մահմեդական տարրը՝ բազմանում:

1872 ու 1876 թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ու Ազգային ժողովը սուլթանական կառավարությանը ներկայացրին Արևմտյան Հայաստանում կատարվող կեղեքումների մասին բողոք-տեղեկագրեր, սակայն իշխանությունները դրանց ուշադրություն չդարձրին [Սարուխան, 1912, 258]:

Մեծ վեզիրին 1876 թ. հանձնված տեղեկագիրը առաջարկում էր.

1. լուծել հողային խնդիրը,
2. Հայաստանի գյուղացիներին ազատել դերեբեյների ու մահմեդական կալվածատերերի հարստահարություններից,
3. Բարձր դուռը գավառներ ուղարկի լիազոր իշխանությամբ օժտված հանձնաժողով՝ հայկական գանգատների քննման համար, որում ընդգրկվեն նաև պատրիարքարանի ներկայացուցիչներ,
4. հայ եկեղեցու և վանքերի կալվածքները մյուլքեր համարվեն և տուրքերից ազատվեն,
5. 21 տարին չլրացած անձանց կրոնափոխությունը արգելվի,
6. Բարձր դուռը հաստատի խառը հանձնաժողով, որի գործառույթը կլինի քննել պատրիարքարանի կողմից ներկայացրած խնդիրները,
7. քրիստոնյաների վկայությունն ընդունելի լինի խառը դատարաններում [«Աւետաբեր», 26.09.1876, 311, «Մեղու Հայաստանի» 09.10.1876, 3, «Մշակ», 11(23).11.1876, 3]:

Տեղեկագիրը թարգմանվել էր ֆրանսերեն և նախատեսվում էր ուղարկել նաև եվրոպական կառավարություններին [Մեղու Հայաստանի, 16.10.1876, 4]: Նման պայմաններում Մեծ վեզիրը պատրիարքին հրավիրում է Բարձր դուռ: Այնտեղ պատրիարքը հաստատել է հայերի հավատարմությունը, ապստամբություններից ու խռովություններից խուսափելու ցանկությունը և միաժամանակ հարստահարությունների ու բռնությունների կանխարգելման պահանջ է դրել [«Մեղու Հայաստանի», 27.11.1876, 3]:

Հայերի՝ մասնավորապես քրդերի բարբարոսություններից պաշտպանելու համար պատրիարքը առաջարկում էր հայերին ներգրավել ոստիկանությունում: Դա նաև կապացուցեր, որ մեծ տերություններին խոստացված բարենորոգումները թղթի վրա չեն մնում [«Մեղու Հայաստանի», 4.12.1876, 43]:

Ըստ «Աւետաբեր» շաբաթաթերթի՝ մեծ վեզիրը վստահեցրել է հայոց պատրիարքին, որ մի քանի օրից տեղեկագրի պատասխանը կստանան: Շաբաթաթերթը հույս էր հայտնում, որ հայերի հարցը ուշադրության կարժանանա, քանի որ նրանք Օսմանյան պետության հավատարիմ զավակներ են [«Աւետաբեր», 26.09.1876, 311]: Այստեղ տեսնում ենք, որ հայերը դեռևս հույսեր էին փայփայում, որ օսմանյան պետությունը կբարելավի իրենց վիճակը՝ հաշվի առնելով նրանց

հավատարմությունը: Սակայն դրանք սին հույսեր էին: Թուրքական իշխանությունները երբևէ որևէ լուրջ քայլ չկատարեցին բարելավելու կեղեքվող քրիստոնյա հպատակների վիճակը: Դա վերջիններին ստիպում էր հայացքն ուղղել եվրոպական քրիստոնյա պետություններին, ինչն էլ դուռ էր բացում մեծ տերությունների համար միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին:

Բալկանյան ճգնաժամը և հայկական ձգտումները: 1875-1876 թթ. թուրքական բռնապետության դեմ ապստամբություններ բռնկվեցին Բոսնիա-Հերցեգովինայում ու Բուլղարիայում: 1876 թ. հունիսի 30-ին Թուրքիային պատերազմ հայտարարեց Սերբիան, իսկ հուլիսի 1-ին՝ Չեռնոգորիան [Marriot, 1917, 288]: Ապստամբության պատճառը քրիստոնյաների հարստահարություններն էին: Նրանք ծանր հարկեր էին վճարում և՛ հողատերերին, և՛ հարկահավաքներին, որոնք հաճախ ավելի շատ գումար էին գանձում, քան նախատեսված էր: Արդարադատություն քրիստոնյաների համար գրեթե չկար, ուստի նրանք նախընտրեցին ապստամբությունը [Reed, 2016, 21]:

Բալկանյան քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումները կրկին միջազգային դիվանագիտության սեղանին դրեցին Արևելյան հարցը: Մեծ տերությունների ակտիվ քննարկման առարկա դարձավ քայքայման ու փլուզման եզրին հայտնված Օսմանյան կայսրության ճակատագիրը: Բնականաբար, բալկանյան ժողովուրդների ապստամբություններն ու նրանց վիճակի բարելավմանն ուղղված մեծ տերությունների միջամտությունը ոգևորեցին նաև հայերին:

Բալկանյան քրիստոնյաների պաշտպանությամբ ամենագործուն կերպով հանդես էր գալիս Ռուսաստանը, որտեղ այդ շրջանում մեծ տարածում էր գտել համասլավոնական գաղափարախոսությունը [Reed, 2016, 29]:

1876 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ռուսական դեսպան Նիկոլայ Իգնատևը կարողացավ Կ. Պոլսի մյուս դեսպաններին համոզել՝ ընդունելու Ռուսաստանի վարչապետ Ալեքսանդր Գորչակովի առաջ քաշած ծրագիրը, որը նախատեսում էր միավորել Բոսնիան ու Հերցոգովինան, Բուլղարիան բաժանել Արևելյան ու Արևմտյան մասերի՝ Տիրնովո ու Սոֆիա կենտրոններով, ստեղծել տեղական վարչություն, երաշխավորել դավանանքի ազատություն, քրիստոնյաների ու մահմեդականների իրավունքների հավասարություն [Виниградов, 2005, 214]:

1876 թ. դեկտեմբերի 11 (23)-ից մինչև 1877 թ. հունվարի 8 (20)-ը Կ. Պոլսում հրավիրվեց մեծ տերությունների դեսպանների կոնֆերանս, որտեղ քննարկվեց Բալկաններում ստեղծված ճգնաժամը հաղթահարելու հարցը: Սակայն այն ձախողելու նպատակով դեսպանաժողովի բացման օրը սուլթան Աբդուլ Համիդ II-ը երկրում սահմանադրություն հռչակեց: Ի վերջո, համոզվելով, որ թուրքերը մտադիր չեն ընդունելու դեսպանաժողովի մշակած առաջարկները՝ տերությունների դեսպանները դիմեցին բողոքի կտրուկ միջոցի. հեռացան Կ. Պոլսից [Սարուխան, 1912, 157]:

Դեսպանաժողովից մեկ օր առաջ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովը որոշում էր ընդունել՝ պահանջելու, որ արևմտահայության համար նույնպես բարենորոգումներ ապահովվեն. «Ազգային Ժողովս, վստահ ըլլալով, թէ Օսմանեան կառավարութիւնն ինչ առանձնաշնորհութիւններ որ պիտի տայ ուրիշ ազգաց, նոյնը պիտի շնորհէ նաև Հայոց ազգին՝ անոր արդի վիճակին բարւոքմանը համար, և այս կերպով որ և է զրկանք տեղի չպիտի ունենան, որ բողոքոյ առիթ ընծայեն Հայոց ազգին» [Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1876-1877, 329]:

«Մեղու Հայաստանի» լրագիրը հույս էր հայտնում, որ դեսպանաժողովի քննարկումներում տեղ կհատկացվի նաև Հայկական հարցի քննարկմանը: Լրագիրը նման եզրահանգման էր եկել եվրոպական զանազան լրագրերում լույս տեսած հոդվածների բովանդակությունից:

Շաբաթաթերթը հայտնում էր, որ «այս հարցը անտարակոյս կգրաւէ թէ Ռուսաց դեսպան գեներալ Իգնատիեւի և թէ Անգղիական դեսպանի ուշադրութիւնը, և ոչ մի տարաձայնութեան տեղիք չէ կարող տալ» [«Մեղու Հայաստանի», 18.12.1876, 2]:

«Մշակը» հաղորդում էր, որ հույն ժողովուրդը հունադավան պատրիարքի միջոցով պատրաստվում էր խնդրագիր ներկայացնել մեծ տերություններին, որպեսզի սլավոններին հատկացվող բարենորոգումները կիրառվեն նաև հույն ժողովրդի համար: Այնուհետև անհրաժեշտ էր համարում, որ նման մի խնդրագիր կազմվի նաև երեք միլիոն բնակչություն ունեցող հայերի անունից [«Մշակ», 2(14).12.1876, 3]:

Ինչպես տեսնում ենք, հայ ազգային գործիչները որոշեցին օգտվել միջազգային նպաստավոր իրավիճակից ու բարձրացնել Արևմտյան Հայաստանի վիճակը բարելավելու խնդիրը: Դա պայմանավորված էր արևմտահայության համար ստեղծված չափազանց ծանր դրությամբ, քանզի Արևմտյան Հայաստանում տիրող անպատժելիությունը վերացնելուն ուղղված պատրիարքարանի նախկինում կատարած բոլոր ջանքերը ամբողջությամբ անուշադրության էին մատնվել թուրքական իշխանությունների կողմից:

Պատմաբան Ստեփան Պողոսյանը գրում է. «Որ Հայկական հարցը զարգացավ միջազգայնացման ուղիով, հետևանք էր նաև այն բանի, որ ծնվելով որպես Օսմանյան կայսրության ներքին հարց՝ արհամարհվեց թուրքերի կողմից: Պարզից էլ պարզ է, որ եթե թուրքական վարչակարգը գոնե փորձեր ինչ-որ քայլերի դիմել հարցը լուծելու ուղղությամբ, այն միջազգային հրապարակ դուրս չէր գա» [Պողոսյան, 2008, 164]:

1876 թ. դեկտեմբերի 6-ին Կ. Պոլսի պատրիարք Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանը հանդիպեց բրիտանական դեսպան Հենրի Էլիոտին: Նա հույս հայտնեց, որ «դեսպանախորհուրդը պիտի չպնդէ Բ. Դրան առաջ, թէ ապստամբուած նահանգներին տրուեն այնպիսի առանձնաշնորհումներ, որոնցից զուրկ պիտի մնան միւս նահանգներն, որոնք հանդարտ են կացել, բայց իրաւունք ունեն, որ իրանց վիճակն ևս նկատողութեան առնուի» [Սարուխան, 1912, 130]: Միևնույն ժամանակ պատրիարքը զգուշացրեց, որ «իր ժողովուրդը շատ զրգռուած է, եւ եթէ եւրոպական պետութիւնների համակրութիւնը գրաւելու համար հարկաւոր էր ապստամբուել, ամենեւին դժուար չէր այդպիսի մի շարժում առաջ բերել» [Սարուխան, 1912, 131]:

Չնայած պատրիարքի մարտական հայտարարություններին՝ իրականում արևմտահայությունը դեռևս պատրաստ չէր զենք վերցնելու ու արյուն թափելու սեփական ազատագրության համար: Մեծամասնությունն անհիմն հույսեր էր փայփայում ինքնավարություն կամ վիճակի բարելավում ստանալ՝ ի վարձատրություն օսմանյան պետության նկատմամբ ունեցած հավատարմության: Դրան տեղյակ էին բրիտանական դիվանագետներն ու սուլթանական պաշտոնյաները, որոնք, դրանից ելնելով, փորձում էին հայկական պահանջներն օգտագործել միայն բալկանյան հարցը ձախողելու համար:

Կ. Պոլսի դեսպանաժողովում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Ռոբերտ Սոլսբերիի հետ նույնպես հայ պատվիրակները հանդիպում և խնդրում են դեսպանաժողովում ներկայացնել թուրքահպատակ հայերի թշվառ դրությունը: Սակայն բրիտանացի պաշտոնյան սառը վերաբերմունքի է արժանացրել հայ ներկայացուցիչներին: Վերլուծելով Անգլիայի աշխարհաքաղաքական շահերը՝ «Մշակը» գրում էր. «Անգլիան նայում է Փոքր Ասիայի և

Հայաստանի վրա որպէս իր բնական ճանապարհի վրա դէպի Հնդկաստան և որովհետև գիտէ, թէ այդ երկիրները իրան երբէք պատկանելու չեն, ամեն միջոցներ գործ կը դնէ որ Ասիայի այդ մասը մնայ թիւրքաց, տէրութեան ճնշող և հարստահարող ոյժի ձեռքում, որպէս զի հայոց աշխատասէր, արդիւնաբերող և զարգացման ընդունակ տարրը երբէք չը զարթնի, երբէք ոչ մի իրաւունք, ոչ մի արտօնութիւն, ոչ մի ինքնավարութիւն չը ստանայ» [«Մշակ», 18.12.1876, 3]:

Դեկտեմբերի 10-ին Հայոց ազգային ժողովը քննարկեց ստեղծված միջազգային նպաստավոր վիճակից օգտվելու հարցը: Հայ գործիչներն անարդար էին համարում, որ մեծ տերությունները բարձրացնում էին միայն բալկանյան քրիստոնյաների վիճակը բարելավելու խնդիրը, մինչդեռ հայերի մասին չէին խոսում, չնայած «այս ժողովուրդը հինգ դարերէ ի վեր մեծէն մինչև փոքրը ամենայն հաւատարմութեամբ հպատակած է տէրութեան և երբէք ցաւ մը պատճառած չէ անոր՝ ոչ գանձը վատնելով և ոչ արիւն թափել տալով. հասած է ժամն՝ որ մեր այս անզուգական հաւատարմութեան վարձատրութիւնը խնդրենք տէրութենէն, և մեր առ Օսմանեան գահն ունեցած երախտագիտական զգացումնիս հանդիսապէս յայտարարենք» [Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1876-1877, 325]:

Ինչպես տեսնում ենք, արևմտահայ գործիչները կարծում էին, որ թուրքական կառավարությունը կգնահատի հայ ազգի դարավոր հավատարմությունը և կբարելավի արևմտահայության վիճակը: Հետաքրքիրն այն է, որ արևելահայերն էլ գրեթե միշտ վստահ էին, որ ռուսական պետությունը կգնահատի հայերի նվիրվածությունը: Սակայն փաստն այն է, որ ուժեղները գնահատում են միայն ուժեղներին: Իսկ օտարի նկատմամբ հավատարմությունը բոլոր ժամանակներում դիտվել և դիտվում է որպես ստրկամտության ու թուլության նշան:

Արևմտահայության հարցը դեսպանաժողովում բարձրացնելու առաջարկով հանդես եկան նաև արևելահայ գործիչները: 1876 թ. դեկտեմբերին «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու նախաձեռնությամբ 9 անձից կազմված մի պատվիրակություն Թիֆլիսի քաղաքապետ, վրացի քաղաքական գործիչ, իշխան Դիմիտրի Կիպիանու գլխավորությամբ Կովկասի փոխարքային փոխանցեց Թիֆլիսի հայ բնակչության ուղերձը՝ խնդրելով միջնորդել ցարի առաջ՝ Թուրքիայի մյուս քրիստոնյաների հետ հավասար պաշտպանելու նաև արևմտահայության դատը [Հովհաննիսյան, 1965, 91]:

Դեկտեմբերի 16-ին Լոնդոնում հասարակական գործիչ Կարապետ Հակոբյանի նախաձեռնությամբ կազմավորվեց լոնդոնահայերի հանձնաժողով՝ արևմտահայության ապագայի հարցը քննարկելու համար: Այդ մարմնի նախագահ ընտրվեց հնդկահայ մեծահարուստ Սեթ Աբգարը: Նրանք ուղերձով դիմեցին Արևելյան հարցով զբաղվող բրիտանական հանձնաժողովի նախագահ Անտոնիո Մանդելային՝ առաջարկելով հայերին ինքնավարություն տալ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի սահմաններում: Փաստաբան Ջեյմս Բրայսը (հետագայում դերկոմս և լորդերի պալատի անդամ) միանգամայն օրինական համարեց այդ պահանջը [ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 63, թ. 7-8]:

Ներսես պատրիարքը համագործակցություն հաստատեց նաև հույն գործիչների հետ, որպեսզի Օսմանյան կայսրության այդ երկու խոշորագույն քրիստոնյա համայնքների շահերը հաշվի առնվեն դեսպանաժողովում: Սակայն մեծ տերություններին հետաքրքրում էին միայն Բոսնիա-Հերցեգովինայի ու Բուլղարիայի խնդիրները: Այդ երկրամասերը համարձակություն էին ունեցել զենք վերցնելու թուրքական բռնապետության դեմ, և մեծ տերությունները պատրաստ էին քննելու ու բարվոքելու նրանց վիճակը:

Այդպիսով՝ հայ-հունական դիմումներն անուշադրության մատնվեցին: Հետաքրքիր է նշել, որ 1877 թ. հունվարին բրիտանացի ռազմական փորձագետ Ռ. Հոմը դա մեծ սխալ ու բացթողում համարեց: Նա համոզված էր, որ լորդ Ռոբերտ Սոլսբերին լուրջ թյուրիմացության մեջ է, քանի որ խաղի մասնակից կողմեր է համարում բրիտանացիներին, ռուսներին ու թուրքերին: «Սակայն այժմ ամենից հզոր խմբակցությունը հույներն են, նրանցից հետո՝ հայերը: Հույները լորդ Salisbury-ի կողմից կոնֆերանսում էլ բացեիբաց անտեսվեցին, դրա համար էլ նրանք կոնֆերանսին հակադրվեցին ատամներով ու եղունգներով..» [Խասիոտիս, 2012, 9]:

Հայ գործիչները սին հույսեր էին կապում մեծ տերությունների ու սուլթանական կառավարության բարի կամքի հետ: Մոռանում էին, որ բալկանյան քրիստոնյաների վիճակը քննարկման առարկա էր դարձել, քանի որ նրանք զենքի էին դիմել և ունեին Ռուսաստանի աջակցությունը:

Բալկանյան քրիստոնյաների պաշտպանությամբ ամենագործուն ձևով հանդես եկավ Ռուսաստանը, որի հանդես գալը պատմաքաղաքական այդ կարևոր պահին, վճռորոշ նշանակություն ունեցավ հետագա քաղաքական զարգացումների վրա: Նրա նախաձեռնությամբ մարտի 19-ին Լոնդոնում տերությունների ներկայացուցիչները հերթական անգամ քննարկեցին Արևելյան հարցը և սուլթանական կառավարությանը ներկայացրին արձանագրություն, որը նախատեսում էր բարելավել բալկանյան ժողովուրդների վիճակը [Սարուխան, 1912, 183]:

Թուրքական իշխանությունների համար ստեղծվեց բավական ծանր վիճակ, քանի որ հայտնվեցին միջազգային լուրջ ճնշման տակ, որը նրանց պարտադրում էր ավելի չգրգռել ու հնարավորինս սիրաշահել հպատակ ազգերին:

1877 թ. մարտի 22-ին մեծ վեզիր Իբրահիմ Էդհեմ փաշան պոլսահայ ազդեցիկ գործիչներից Գրիգոր Օտյանի միջոցով Ներսես պատրիարքին տեղեկացրեց, որ իբր բոլոր կուսակալություններին հրաման է ուղարկել, որպեսզի պատժեն մինչ այդ անպատիժ մնացած հանցագործներին, փոխեն բնակչությանը կեղեքող ու անարդարություններ կատարող պաշտոնյաներին, ինչպես նաև վանքերի սեփականության մասին նոր օրենք են պատրաստում [Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, 2002, 198-199]: Կ. Պոլսի լրագրերում տեղեկություններ են հրապարակվում, որ իբր Բարձր դուռը, անսալով պատրիարքի բողոքին և ցանկանալով վերջ դնել քրդերի ավարառություններին ու բարբարոսություններին Հայաստանում և Փոքր Ասիայում, հրաման է արձակել, որ յուրաքանչյուր, մինչև անգամ աննշան ավազակություն պատժվի մահապատժով [Արծրունի Գրիգոր, «Մշակ», 01(13).05,1877, 1]: Միաժամանակ կառավարության նիստում, որին ներկա էր նաև Գ. Օտյանը, բազմաթիվ նախարարներ գովեստի խոսքեր հնչեցրին հայոց պատրիարքի հասցեին, որ համարձակություն էր ունեցել ներկայացնելու երկրում տիրող ծանր վիճակը՝ դրանով մեծ ծառայություն մատուցելով պետությանը [Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, 2002, 198-99]: Այսպիսով՝ միջազգային լուրջ ճնշման ու պատերազմի վտանգի առաջ գտնվող թուրքերը փորձում էին խոսքով սիրաշահել հայերին, հեռու պահել հնարավոր ընդվզումներից:

Ռուս-թուրքական պատերազմն ու Հայաստանի ինքնավարության հույսերը: Օսմանյան իշխանությունները, ստանալով Մեծ Բրիտանիայի գաղտնի աջակցությունը, մարտի 30 (ապրիլի 10)-ին մերժեցին Բալկաններում բարենորոգումներ իրականացնելու մեծ տերությունների վերջնագիրը: Դա առիթ դարձնելով՝ 1877 թ. ապրիլի 12 (24)-ին Ռուսաստանի կայսր Ալեքսանդր II-ը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը [Marriot, 1917, 295]:

Ռուսաստանի միջամտությունը, անշուշտ, առավելապես պայմանավորված էր ոչ թե հավատակից ժողովուրդներին փրկելու մարդասիրական մղումներով, այլ սեփական ռազմաքաղաքական հեռահար ծրագրերով: Հայտնի է, որ 1853-1856 թթ. տեղի ունեցած Արևելյան կամ Ղրիմի պատերազմի ժամանակ Ռուսաստանը պարտություն էր կրել Օսմանյան կայսրության և նրան միացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Սարդինիայի միացյալ ուժերից: 1856 թ. Փարիզի նվաստացուցիչ պայմանագրով Ռուսաստանի դիրքերը Սև ծովի ավազանում, Բալկաններում ու Մերձավոր Արևելքում թուլացել էին: Այդժամ միջազգային նպաստավոր պայմաններ էին ստեղծվել՝ վերականգնելու Ռուսական կայսրության դիրքերը տարածաշրջանում ու վերահաստատելու գերտերության կարգավիճակը: Ցարական կառավարության գլխավոր նպատակներից էր Կ. Պոլսի ու սևծովյան նեղուցների գրավումը, ինչի շնորհիվ ռուսական նավատորմի համար Սև ծովից ազատ մուտք կբացվեր դեպի Միջերկրական:

Պատերազմն արևմտահայության մեջ հույսեր արթնացրեց, որ կարող են վերջնականապես ազատվել թուրքերի ու քրդերի դարավոր վայրագ տիրապետությունից: Ինչպես բոլոր ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, այս անգամ ևս, արևմտահայերի բացահայտ համակրանքը ռուսների կողմն էր: Դա պայմանավորված էր նրանով, որ թուրքերն ու քրդերն անտանելի ու դժոխային պայմաններ էին ստեղծել նրանց համար:

Բոլոր ռազմաճակատներում ռուսները ջախջախեցին թուրքական բանակներին, գրավեցին Արևմտյան Հայաստանի զգալի մասը, Բուլղարիան և մոտեցան մայրաքաղաք Կ. Պոլսին: Այսպիսով՝ Օսմանյան կայսրությունը կանգնեց կործանման իրական վտանգի առջև, և այն փրկելու միակ հնարավորությունը զինադադար խնդրելն էր:

Պատերազմում թուրքերի պարտությունը բացահայտ էր, և սուլթան Աբդուլ Համիդ II-ը ստիպված էր հաշտություն խնդրել: 1878 թ. հունվարի 19-ին Ադրիանուպոլսում ստորագրվեց զինադադարի համաձայնագիր: Սակայն այդ համաձայնագրում հայերի ու Հայաստանի մասին խոսք չկար, և այդ հանգամանքը մտահոգեց հայ գործիչներին:

«Գրեթէ յուսահատելու էր,– 1878 թ. հուլիսի 21-ին Ազգային ժողովին ներկայացված զեկուցագրում նշում էր պատրիարքը,– և ես չ'գիտեմ, թէ ի՞նչպէս չ'յուսահատեցանք: Անկարելի է նկարագրել Ազգին մորմոքը…» [Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1878-1880, 62]: Ինչպես տեսնում ենք, պոլսահայ ղեկավարությունը սին հույսեր էր փայփայում, որ զինադադարի համաձայնագրում պետք է Հայաստանի անունը նշվեր:

Պետք է նշել, որ պատերազմում ռուսական բանակի հաղթանակից ու Թուրքիայի պարտությունից հետո արևմտահայության առջև իսկապես բացվեց ինքնավարություն ձեռք բերելու որոշակի հեռանկար:

«Փորձ» եռամսյա հանդեսը գրում էր, որ եվրոպական առաջադեմ մամուլը սկսել է գնահատել Փոքր Ասիայում տանջվող ազգերի արժանապատվությունը՝ գտնելով, որ քրիստոնյա ազգերին՝ հայերին, հույներին, նույնպես պետք է անկախություն կամ ինքնավարությունը շնորհվի: Օրինակ՝ «Московскія Вѣдомости» լրագիրը նշում էր, որ դեսպանախորհրդում հայերի համար էլ պետք է պահանջեն նույն իրավունքները, ինչ նախատեսվում էր տրամադրել արևելքի մյուս քրիստոնյաներին [«Փորձ, 1877/1878, 355]:

Այս շրջանում մի շարք ռուսական թերթեր նույնպես պահանջում էին հայերին ինքնավարություն տալ [Սարուխան, 1912, 355-357]: Ռուս լրագրողներից մեկը նշում էր. «Մի՞թէ հայերը պիտի

չստանան քաղաքական իրաւունքներ լոկ այն պատճառով, որովհետև նրանք տանջուել են, չարչարուել են, բայց համբերել են և չեն ապստամբուել» [Սարուխան, 1912, 336]:

Առանձին ռուս գործիչներ նույնիսկ հանդես էին գալիս Հայաստանին անկախություն տալու կոչերով: «Պռավոսլավնոյե օբոզրենիե» հանդեսում ռուս նշանավոր հոգևոր գործիչ ու լուսավորիչ Թեոֆան եպիսկոպոս Զատվորնիկը պահանջում էր վերականգնել հայկական թագավորությունը [Հովհաննիսյան, 1965, 108]: Հեղինակը միաժամանակ հերքում էր կասկածները, թե թուրքահպատակ քրիստոնյաները անպատրաստ են քաղաքական կյանք վարելուն: Իսկ «Սանկտ Պետերբուրգսկի վեդոմոստի» լրագիրը առաջարկել էր Ասիական Թուրքիայում անկախություն տալ հայերին [«Փորձ», 1877/1878, 355-356]:

Բրյուսելի «Le Nord» լրագիրը գրում էր, որ Ռուսաստանը պատերազմը սկսել էր ոչ միայն սլավոնների, այլ նաև հայերի ու հույների պաշտպանության համար: Ռուսաստանի շահերին չի հակասում բուն Հայաստանում մի անկախ հայկական իշխանություն ձևավորելը [«Մշակ», 27.06.1877, 4]:

Իսկ ըստ բելգիական «Indep. Belge» լրագրի՝ ազատ Հայաստանում քրիստոնյա իշխանի հաստատումը, որը չի լինի ռուս կամ բրիտանացի, օգուտներ կպարգևի ինչպես Ռուսաստանին, այնպես էլ Անգլիային [«Մշակ», 30.06.1877, 3-4; Բ. Վ., «Մշակ», 04.07.1877, 1; «Հայկական աշխարհ», 09-10.1877, 216-217): Այն առաջարկում էր.

- Թուրքական Հայաստանը դառնա առանձին քաղաքական միավոր,
- սուլթանին՝ որպես հատուցում, տարեկան որոշակի հարկ վճարի,
- Հայաստանի իշխանը գահին հաստատվելու էր սուլթանի կողմից,
- Հայաստանը պետք է ունենա կառավարման սահմանադրական ձև,
- Հայաստանը լիովին ազատություն է ստանալու ներքին գործերում,
- Հայաստանը ունենալու էր որոշակի թվով զորք՝ ներքին անվտանգության համար,
- Հայաստանը լինելու էր չեզոք երկիր՝ Ռուսաստանի, Թուրքիայի ու Պարսկաստանի համատեղ պաշտպանության ներքո (Բ. Վ., «Մշակ», 04.07.1877, 1):

Այդ ամենը նոր լիցք ու հույսեր էր տալիս հայությանը: Թվում էր՝ եկել է դարեր շարունակ սպասված այն պահը, երբ արևմտահայությունը վերջապես ազատ շունչ կքաշեր՝ թոթափելով թուրք պաշտոնյաների, քուրդ բեկերի ու չերքեզների ճնշումներն ու հարստահարումները: Պետք է նշել, որ այդ շրջանում անկախության մասին որևէ խոսք չկար, և հայերի միակ ձգտումը ինքնավարություն ձեռք բերելն ու քաղաքացու համար տարրական իրավունքներ ապահովելն էր: Իհարկե, հայ գործիչներից շատերը հստակորեն գիտակցում էին, որ ինքնավարությունը դեպի անկախություն տանող ճանապարհն էր:

Պատերազմում ռուսական զենքի հաջողությանը զուգընթաց մեծանում էին հայերի հույսերը Հայաստանի ազատագրման վերաբերյալ: Հայկական հասարակական մտքի խոսափող դարձած «Մշակ» լրագիրը 1877 թ. մայիսի 12-ին հարց է բարձրացնում Հայաստանին ինքնավարություն շնորհելու կամ ռուսական հովանու ներքո ընդունելու վերաբերյալ [«Մշակ», 12.05.1877, 1]:

Գրիգոր Արծրունին Հայաստանի ինքնավարությունը պատկերացնում էր միայն ռուսական հովանու ներքո: Պատերազմի ելքից կախված՝ ներկայացնում է մի քանի սցենար, որոնց դեպքում հայերը պարտավոր են տարբեր կերպ գործել: Օրինակ, եթե Թուրքիան պատերազմից հետո, թեկուզ

պարտված շարունակեր գոյություն ունենալ, ապա Ռուսաստանը պետք է պաշտպաներ քրիստոնյաներին և նրանց, այդ թվում՝ հայերի համար պահանջելու էր ինքավարություն, ինչպես սլավոնների համար: Եթե պատերազմից հետ Թուրքիան դադարեր գոյություն ունենալուց Հայաստանը կարող էր անցնել կա՛մ Անգլիային, կա՛մ Ռուսաստանին: Հեղինակը պաշտպանում էր պրոռուսական կուրսը՝ գտնելով, որ ազատվելով մեկ բռնարարից՝ հայերը կընկնեին մյուս բռնարարի ու հարստահարիչի ձեռքը, և Ռուսաստանը ձեռք կբերեր ավելի վատ հարևան՝ հանձին Անգլիայի, քան Թուրքիան էր: Եթե Թուրքիան անհետանար, հայերը պետք է ցանկացած ջանք գործադրեին՝ միանալու Ռուսաստանին: Սակայն եթե չհաջողեին և ընկնեին Անգլիայի հսկողության տակ, ապա պարտավոր էին պայքարելու անկախության համար, և ազատության ճանապարհին նրանց աջակիցը լինելու էր Ռուսաստանը: Հարևան Հայաստանը ռուսական շահին համապատասխան է, իսկ անկախության ձեռքբերման համար Հայաստանը հավատարիմ ու երախտագետ կլինի Ռուսաստանին [«Մշակ», 19.05.1877, 1-2]:

Դեռևս 1877 թ. հոկտեմբերի 21-ին Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի պատգամավորների մեծ մասը Ղալաթիայի Կենտրոնական վարժարանում գաղտնի խորհրդակցություն գումարեց և որոշեց Հայկական հարցը ներկայացնել Ռուսաստանի դատին: Նրանք Ներսես վարդապետ Բարդուղյանի միջոցով Գևորգ Դ կաթողիկոսին ուղարկեցին արևմտահայության ձգտումներն արտահայտող առաջարկներ՝ խնդրելով դրանք ներկայացնել ռուսական իշխանություններին: Այն նախատեսում էր երեք հնարավոր տարբերակ.

1. Մինչև Եփրատն ընկած տարածքը, որը նախկին Մեծ Հայքն է, Թուրքիային չվերադարձնել ու թողնել Ռուսաստանին: Փակագծերում նշում էին, որ այս առաջարկն այնքան էլ ցանկալի չէ, սակայն եթե Ռուսաստանը գրավի Հայաստանը, ոչինչ անել չեն կարող և խնդրում էին, որ հնարավորության դեպքում քաղաքների ու գյուղերի ազգային ներքին վարչական ձևը չփոխեն:

2. Եթե Հայաստանը չէր անցնելու Ռուսաստանին, ապա խնդրում էին տալ այն շնորհներն ու արտոնությունները, ինչ Բուլղարիային ու բուլղարներին՝ ռուսական կայսեր պաշտպանությամբ ու հովանավորությամբ:

3. Եթե Հայաստանը վերադարձվելու էր Թուրքիային, խնդրում էին երաշխիքներ պահանջել երկրի բարեկարգման ու հպատակների հավասարության համար, և այդ երաշխիքները լինեն Հայաստանում ռուսական զորքերի ներկայության պայմաններում կատարվող բարենորոգումները, որի տակ հասկանում էին.

ա) ոստիկանության մեծ մասը հայերից կազմվի,

բ) հայերը ևս կանոնավոր զինվորական կրթություն ստանան,

գ) քրդերն ու չերքեզները կա՛մ հեռացվեն Հայաստանից, կա՛մ լեռներից իջնելով՝ քաղաքներում ու գյուղերում նստակեցության անցնեն, իսկ նրանց ոստիկանության մեջ չընդգրկեն,

դ) հայերին տրվեն պաշտոններ, հատկապես կուսակալներն ու գավառապետերը լինեն հայեր,

ե) միայն այդ ամենից հետո ռուսական զորքերը հեռանան Հայաստանից:

Խնդրում էին, որ կաթողիկոսը պատգամավորություն ուղարկի մեծ տերությունների մոտ՝ Հայկական հարցը դեսպանաժողովում բարձրացնելու համար: Առաջարկում էին մյուս տերություններին ներկայացնել իրենց առաջարկների միայն երկրորդ ու երրորդ կետերը, իսկ միայն ռուսական պաշտպանության ու երաշխիքների փոխարեն պահանջել եվրոպականը [Սարուխան, 1912, 260-262]:

Միևնույն ժամանակ Ներսես պատրիարքը մեծ վեզիրին ներկայացրեց մի գրություն, որով առաջարկում էր հայերի համար ապահովել. «1. աշխատանքի ազատություն և ապահովություն, 2. անձնական ապահովություն, 3. սեփականության ապահովություն, 4. ուսումնարանների, եկեղեցու և ազգային սեփականության ապահովություն, 5. վերջապես, Հայաստանի վարչական կառավարման բարելավում՝ ժամանակի պահանջներին և հանգամանքներին համապատասխան» [Կիրակոսյան, 1978, 120-121]:

1877 թ. դեկտեմբերի 14-ին ու 17-ին Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի դռնփակ նիստում քննարկվեց հայերին զինվորագրելու թուրքական առաջարկը: Որոշվեց մերժել դա: Պատգամավորների զգալի մասը ձգտում էր ունենալ «Անկախ կամ ռուսաց Հայաստան» [«Մշակ», 18.01.1878, 2-3]:

Պատրիարքը հույս ուներ, որ եվրոպական երկրների աջակցությամբ հնարավոր է Հայաստանի համար ինքնավարություն ձեռք բերել: Այդ նպատակով նա դիմեց Հենրի Լեյարդին՝ սպառնալով, որ եթե եվրոպական տերությունները և հատկապես Մեծ Բրիտանիան չօգնեն հայկական պահանջների բավարարմանը, ապա իրենք կդիմեն Ռուսաստանի աջակցությանը [Գալոյան, 1996, 5]:

Պատրիարքը միաժամանակ սկսեց շոշափել ռուս գործիչների կարծիքները Հայկական հարցի առնչությամբ: Ռուսական բանակի կողմից Ադրիանուպոլսի գրավումից հետո Ներսես պատրիարքի հանձնարարությամբ տեղի առաջնորդական փոխանորդ Գևորգ վարդապետ Ռուսճուգլյանը Ֆիլիպոպոլսի նախկին ռուսական հյուպատոս Նայդեն Գերովի միջնորդությամբ գաղտնի հանդիպում ունեցավ Թուրքիայում ռուսական դեսպան, սլավոնաֆիլական շարժման ակնառու ներկայացուցիչ կոմս Նիկոլայ Իգնատևի հետ: Կոմսը հետևյալ կերպ ներկայացրեց իրավիճակը. «Այո՛, Ռուսիոյ բանակը մինչև Կարին յառաջացած է և գրաւած է: Հայաստանի այդ մասն այժմ ազատութիւն կը վայելէ, բայց հայ ժողովուրդն ազգովին կամ Հայաստանի մեծ մասը պիտի չկարենայ գտնել առ այժմ այն ազատութիւնը, զոր ունեցած են պուլղարք, *վասնզի հայք անպատրաստ գտնուեցան եւ Հայաստանի մէջ դարձած են մեռեալ տարրք*: Ես երեք տարիէ ի վեր Հայոց Դատին պաշտպանն եւ փաստաբանն եղած էի. թողունք գավառցի հայոց աղքատութիւնն եւ անտարբերութիւնը, մանաւանդ ցիրուցան պանդխտութեան դատապարտեալ վիճակը, մինչեւ իսկ *Կ. Պոլսոյ հայոց ողջախոհ եւ գործօն մասն՝ սկսեալ Նուպար փաշայէ, արգելք եղած են իմ բարենպատակ գործոցս*: Բայց մի վհատիք, կը յուսադրեմ զձեզ: Քանի որ Թիւրքիոյ հպատակ էք, ապագային յուսով, այս վայրկեանէս սկսեցէք պատրաստ լինիլ, պատրաստ՝ դաստիարակութեամբ, ուսմամբ եւ քաղաքագիտութեամբ, պատրաստ՝ նիւթապէս եւ բարոյապէս, պատրաստ՝ ներքին կազմակերպութեամբ. պատրա՛ստ եղեք այն օրուան համար, յորում քաղաքականութիւնը պիտի առաջնորդէ զձեզ յազատութիւն, եւ ես պատրաստ եմ միշտ օգնել ձեզ: Պատրիարքնիդ թող ժամավաճառ չլինի, թող սկսէ գործելու, ժամ է» [Սարուխան, 1912, 270-271]:

Այս հանդիպման մասին Գ. Ռուսճուգլյանը 1878 թ. հունվարի 20-ին հաղորդեց պատրիարքին: Ն. Իգնատևի արագորեն գործելու կոչը ոգևորություն առաջացրեց պոլսահայերի մեջ: Սակայն հայ գործիչներն անուշադրության մատնեցին նրա մեղադրանքներն ու Հայկական հարցի լուծման անժամանակ լինելու մասին ակնարկները: Իրականում Ն. Իգնատևը պարզորոշ հասկացնում էր, որ հայերը պետք է նախապատրաստվեին, որպեսզի հաջորդ հարմար առիթի դեպքում իրենց խնդիրներն առաջ քաշեին, իսկ ներկա պահը հայերի համար դեռ վաղ էր համարում:

Ինչպես տեսնում ենք, ռուս քաղաքական գործիչներն այնքան էլ հակված չէին հայերին ինքնավարություն տալու գաղափարին: Ն. Իգնատևը հայությանը համարում էր «մեռած տարր, անտարբեր կամ հակառուս», չնայած պատերազմի ժամանակ ռուսական բանակին էին միացել ավելի քան 40.000 հայ կամավորներ, իսկ պոլսահայերը մերժել էին կամավորներ տրամադրել թուրքական բանակին:

«Փորձ» եռամսյա հանդեսը հայերեն է թարգմանում Լոնդոնում 1878 թ. մարտին լույս տեսած «Դեսպանաժողովն ու հայերը» գրքույկը: Այն հիմնավորում էր, որ պետք է Հայաստանին տալ լիակատար ազատություն ու ինքնավարություն: Բրոշյուրը հավաստիացնում էր հայերին, որ Մեծ Բրիտանիան կգործադրի ամեն ջանք իր հզոր օժանդակությամբ ինքնավար Հայաստան ստեղծելու համար: Անգլիան կապահովի Հայաստանի առաջադիմությունն ու լուսավորությունը, կրոնի և խղճի ազատությունը, նահանգային ինքնավարությունը [«Փորձ», 1877/1878, 434-447]:

Հայ դատի ջերմ պաշտպան Ջեյմս Բրայսը «Թայմզ» լրագրին տված հարցազրույցում ասել էր, որ հայերը փափագում են Լիբանանի նման ինքնավարություն, տեղական ինքնավարություն, բնիկ տեղական զորք՝ քրդերից պաշտպանվելու համար [«Արեւելեան մամուլ», 05.1878, 5-19]:

1878 թ. փետրվարին գերիների փոխանակությամբ զբաղվելու պատրվակով Ադրիանուպոլիս ժամանեցին Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի առաջին ու երկրորդ ատենապետեր Ստեփան փաշա Ասլանյանը, ով Թուրքիայի գլխավոր զինվորական բժիշկն էր, և պետական խորհրդի անդամ Հովհաննես Նուբյանը: Որպես Կարմիր մահիկի ներկայացուցիչ՝ վերջինս հոգալու էր հիվանդների փոխադրությունը: Նրանք պատրիարքի հանձնարարությամբ գաղտնի հանդիպում ունեցան Ն. Իգնատևի հետ և ներկայացրին հունվարի 31-ին պատրիարքի գրած նամակը, որով Ռուսաստանի աջակցությունն էր խնդրում հայերին ինքնավարություն տալու համար: Հայ պատվիրակները ցանկություն էին հայտնում ստանալ Լիբանանի կարգավիճակին նմանվող ինքնավարություն: Մի քանի օրից Ն. Իգնատևը նրանց վստահեցրեց, որ կայսր Ալեքսանդր II-ի հավանությամբ հայերի խնդիրը ևս ներկայացվելու էր պայմանագրում [Գաբիկեան, 1962, 172]: Սակայն ինչպես հետագայում պարզվեց, ռուսական ծրագրերն ու հայության ձգտումները բավական հեռու էին իրարից:

Իր զեկուցագրում Ն. Իգնատևը նշում է, որ ինքնավարության ձգտումներով ու խնդրանքներով հայերը բավական ծանր վիճակի մեջ էին դրել իրեն: Նրան զարմացրել էր, որ պատրիարքը բացահայտորեն շնորհավորական ուղերձ էր հղել ռուսական բանակի հրամանատարին, իսկ թուրքական պետության բարձրաստիճան հայ պաշտոնյաներ Ս. Ասլանյանն ու Հ. Նուբյանը այցելել էին իրեն: Նրանք ներկայացրել էին հայերի ծանր վիճակը և Հայաստանի համար ինքնավարություն էին խնդրել Սեբաստիայի, Վանի, Մուշի և Էրզրումի նահանգների տարածքում, որոնք առաջարկում էին որոշ ժամանակով զբաղեցնել ռուսական բանակի կողմից [Сан-Стефано, 1915, 52]:

Ն. Իգնատևը, սակայն, այդ գործիչներին մեղադրեց, թե նրանք միշտ հակառուսական քաղաքականություն են վարել, և հարցրեց, թե ինչու են այժմ Ռուսաստանի հովանավորությունը խնդրում: Հայ գործիչները պատասխանեցին, որ նախկինում իրենք փորձում էին հավատարիմ մնալ թուրքական պետությանը՝ հուսալով, որ եվրոպական պետությունների առաջարկած բարենորոգումները կիրականացվեն, և հայ բնակչության վիճակը կբարելավվի, սակայն այժմ Թուրքիան՝ որպես հզոր տերություն, դադարում է գոյություն ունենալուց, և իրենք անհրաժեշտ են համարում Հայաստանի համար ինքնավարություն ձեռք բերել Ռուսաստանի հովանավորությամբ [Сан-Стефано, 1915, 53]:

Նույն խնդրանքով մեկ այլ պատվիրակություն ևս այցելեց Ն. Իգնատևին, որը բերել էր փետրվարի 1-ին գրված խնդրագիր՝ Ներսես պատրիարքի ու ութ եպիսկոպոսների ստորագրությամբ, որում խնդրում էին միջնորդել կայսեր առաջ, որպեսզի հայերին վերցնի իր հովանու տակ, և Հայաստանին տրվի այնպիսի ինքնավարություն, ինչպիսին բալկանյան քրիստոնյաներին [Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, 206-207]:

1878 թ. փետրվարի 1-ին Կ. Պոլսի պատրիարքարանը 9 եպիսկոպոսների ստորագրությամբ խնդրագրեր ուղարկեց Ռուսաստանի կայսր Ալեքսանդր II-ին և վարչապետ Ա. Գորչակովին: Նրանք շնորհավորում էին ռուսական զենքի փայլուն հաղթանակը և խնդրում էին հովանավորել հայ ժողովրդին՝ ստանալու այնպիսի ինքնավարություն, ինչպիսին ձեռք էին բերում եվրոպական քրիստոնյաները [Սարուխան, 1912, 272-278]:

Սան Ստեֆանոյի բանակցությունների նախօրյակին թուրք պատվիրակները հանդիպում ունեցան ռուսական Բալկանյան բանակի գլխավոր հրամանատար, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի հետ և խնդրեցին չքննարկել Հայկական հարցը: Սակայն իշխանը պատասխանեց, որ կայսրից հատուկ հրահանգ է ստացվել, և ինքը ոչինչ չի կարող անել [Գալոյան, 1996, 7]:

Մեծ իշխանն ընդունեց նաև Ն. Վարժապետյանին, որը Սան Ստեֆանո էր մեկնել սուլթանի գիտությամբ: Պատրիարքը խնդրեց օժանդակել Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու ծրագրին, բայց իշխանը չպաշտպանեց նաև այդ գաղափարը [Գալոյան, 1996, 8]:

Այսպիսով՝ ռուսական կողմը մերժեց և՛ թուրքերի, և՛ հայերի խնդրանքները Արևմտյան Հայաստանի հարցում: Ռուսաստանն ուներ սեփական շահերը և, բնականաբար, չէր պատրաստվում բավարարում տալ այլ ժողովուրդների պահանջներին ու ազգային ձգտումներին:

Շուտով Ն. Իգնատևը Ռուսաստանի վարչապետ ու արտգործնախարար Ա. Գորչակովից ստացավ հեռագիր, որում պարզաբանվում էր կառավարության դիրքորոշումը Հայաստանի հարցում: Նշվում էր, որ Կովկասյան բանակի հրամանատար Միխայիլ Ռոմանովն առաջարկել է Կովկասում սահմանափակ տարածքներ միացնել Ռուսաստանին, որը հավանություն էր գտել նաև կայսրի կողմից, հետևաբար Հայոց պատրիարքի բարձրացրած ինքնավարության հարցը կապված չէ իրենց ծրագրերի հետ և պետք է մերժվի [Сан-Стефано, 1915, 794]:

Ռուսական կառավարությունը դեմ էր Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը, քանի որ այն հետագայում կարող էր արգելակել ռուսների կողմից այդ տարածքների նվաճման ծրագրի իրականացմանը, միաժամանակ կարող էր վարակիչ ազդեցություն ունենալ արևելահայերի վրա, որոնք նույնպես կձգտեին որոշակի ինքնավարության:

Հարկ է նշել, որ պատրիարքը, Ս. Ալանյանն ու Հ. Նուրյանը ռուս գործիչների հետ բանակցությունների մեջ էին մտել սուլթանի գիտությամբ: Թուրքերը վախենում էին, որ ռուսական բանակի գրաված բոլոր տարածքները կմիացվեին Ռուսաստանին, այդ պատճառով էլ հայ գործիչներին ոչ միայն թույլատրել, այլև խորհուրդ էին տվել ինքնավարություն պահանջելու Թուրքիայի սահմաններում: Դա թուրքական կողմի դիվանագիտական խաղն էր, որն ի վերջո պսակվեց հաջողությամբ: Իհարկե, արևմտահայերը հասկանում էին թուրքերի նպատակը և փորձում էին օգտվել հարմար առիթից:

1878 թ. փետրվարի 13-ին Ազգային ժողովի ձեռնհասության դիվանի ատենապետ Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանը Կ. Պոլսից Վահրամ եպիսկոպոս Մանկունուն ուղարկած նամակում նկա-

բագրում էր պոլսահայերի մոտ տիրող միասնությունը, երբ մի կողմ էին դրվել բոլոր քաղաքական ու կրոնական վեճերը: Բոլորը ձգտում էին հասնել Հայկական հարցի լուծմանը: Միակ տարբերությունն այն էր, որ հայ կաթոլիկներն ու բողոքականները Ֆրանսիայի ու Անգլիայի միջնորդությամբ ցանկանում էին Կիլիկիայի ինքնավարության հարցը ևս բարձրացնել (Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, 208-211): Դրան կողմ էր նաև Խորեն Նարբեյը, որը ձգտում էր եղբորը՝ Գվիդոն Լուսինյանին (նախկինում՝ հայր Ամբրոսիոս վարդապետ Գալֆյան), դարձնել Կիլիկիայի իշխան, քանի որ իրենք իբր սերում էին Լուսինյան արքայատոհմից [Սարուխան, 1912, 273]:

«Արևելյան մամուլը» ոգևորվել էր ապրիլին Լոնդոնում «Արևելյան հարցը և հայերը» վերնագրով գրքույկի հրատարակմամբ: Այն առաջարկում էր հայերին տրամադրել այնպիսի ինքնավարություն ինչպիսին տրվելու էր Բուլղարիային [«Արեւելեան մամուլ», 06.1878, 42-43]:

Պատրիարքարանի կողմից Հայաստանի ինքնավարության ծրագիր է կազմվում՝ Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյանի պատվիրակության հետ Եվրոպա ուղարկելու համար: Դրա հեղինակն էր պոլսահայ նշանավոր պետական գործիչ, օսմանյան սահմանադրության համահեղինակներից Գրիգոր Օտյանը: Այն կոչվում էր «Ծրագիր Կազմակերպական կանոնադրության Թրքական Հայաստանի համար»: Այն նախատեսում էր Արևմտյան Հայաստանը դարձնել ինքնավար և նրան ծովային ելք տրամադրել՝ Ռիզե նավահանգստով: Կառավարիչը լինելու էր հայ, իսկ նստավայրը՝ Էրզրումը: Կառավարիչն էր նշանակելու գավառների ու գավառակների բոլոր ղեկավարներին, դատավորներին: Հայաստանի եկամուտների 20 %-ը տրամադրվելու էր կայսերական կառավարությանը: Ժանդարմերիայի ու միլիցիայի մեջ ընդգրկվելու էին հայերը և 5 տարուց ավելի երկրամասում ապրող ոչ քոչվոր այլազգիները: Երկրամասի խորհուրդը կազմավորվելու էր հավասար թվով հայերից ու մահմեդականներից [Անահիտ, 1907, 145-146]:
Դա, փաստորեն, ինքնավար հայկական պետություն ստեղծելու հստակ ծրագիր էր, որի գործադրման դեպքում Հայաստանը որոշ ժամանակ անց հնարավորություն կունենար ձեռք էր բերելու լիարժեք անկախություն: Սակայն այդ նախագիծը չքննարկվեց Բեռլինի կոնգրեսում:

Ինչպես տեսնում ենք, օսմանահպատակ արևմտահայության ծանր վիճակը բարելավելու ուղղությամբ հայ հոգևոր-քաղաքական վերնախավը տարբեր նախագծեր էր առաջ քաշում, փորձում էր օգտվել նպաստավոր թվացող ցանկացած իրավիճակից: Սկզբնապես քննարկվում էին տեղական բարեփոխումների, քաղաքացիական տարրական իրավունքներ տալու, հայերի անվտանգությունն ապահովելու խնդիրները: Սակայն Բալկանյան հարցի բարձրացումը և միջազգային միջամտությունը օսմանյան ներքին գործերին, հետզհետե սկսեցին հայ քաղաքական միտքն ուղղորդել դեպի ինքնավարության, որոշ դեպքերում՝ նույնիսկ անկախության գաղափարը:

References

“Anahit”, Pariz, 1907, tiv 6-9. (in Armenian)
“Avetaber”, K. Polis, 1876, sebtemperi 26, tiv 39. (in Armenian)
Atenagrutiunk Azgayin zh՛oghovoy, 1876-1877, K. Polis. (in Armenian)
Atenagrutiunk Azgayin zh՛oghovoy, 1878-1880, K. Polis. (in Armenian)
“Arewelean mamul”, Zmiurin, 1878, mayis. (in Armenian)
“Arewelean mamul”, Zmiurin, 1878, hunis. (in Armenian)

Ardzruni G., Hayastan inch petk´ ē darnay, "Mshak", Tuflis, 1877, mayisi 12, tiv 33. (in Armenian)
Ardzruni G., Tiurkiayi mi gargadrutiun, "Mshak", Tuflis, 1877, okostosi 1, tiv 55. (in Armenian)
Artdzuni G., Miak elk´, "Mshak", Tuflis, 1877, mayisi 19 (31), tiv 35. (in Armenian)
B. V., Tiurkats Hayastany, "Mshak", Tuflis, 1877, hulisi 4 (16), tiv 48. (in Armenian)
Gabigean Kh. 1962, Haygagan harts´ ě Arevelean harts´i mech (1860-1880), Beyrut´. (in Armenian)
Galoyan G. 1996, Arevmtyan Hayastani ink´navarutyan harts´ě Berlini 1878t. vehazh´oghovu nakhordogh shrchanum, "Lraber hasarakakan gitutyunneri", Yerevan. (in Armenian)
Lazean G. 1946, Hayastan yev Hay datě (Vaveragrer), Gahire. (in Armenian)
Khasiotis I. 2012, Patmakan avanduyt yev k´aghak´akan irapashtutyun. Hunakan k´aghak´anutyuny Haykakan harts´i veraberyal (1876-1996), targm. ` H. Bartikyan, Yerevan. (in Armenian)
Kirakosyan J. 1978, Burzh´uakan divanagitutyuny yev Hayastany (XIX dari 70-akan tt.), Yerevan. (in Armenian)
HAA, f. 57, ts. 1, g.63, t. 7-8. (in Armenian)
Haykakan ashkharh, 1877, Bagu, tiv 8-9, ogostos-sebtemper. (in Armenian)
Hovhannisyan R. 1965, Arevmtahay azgayin-azatagrakan sharzh´umnery yev Karini "Pashtpan Hayrenyats" kazakerputyuny, Yerevan. (in Armenian)
"Meghu Hayastani", Tiflis, 1876, hoktemperi 9, tiv 39. (in Armenian)
"Meghu Hayastani", Tiflis, 1876, hoktemperi 16, tiv 40. (in Armenian)
"Meghu Hayastani", Tiflis, 1876, noyemperi 27, tiv 46. (in Armenian)
"Meghu Hayastani", Tiflis, 1876, dektemperi 4, tiv 47. (in Armenian)
"Meghu Hayastani", Tiflis, 1876, dektemperi 18, tiv 49. (in Armenian)
"Mshak", Tiflis, 1876, Noyemperi 11 (23), tiv 43. (in Armenian)
"Mshak", Tiflis, 1876, dektemperi 2 (14), tiv 46. (in Armenian)
"Mshak", Tiflis, 1876, dektemperi 18, tiv 49. (in Armenian)
"Mshak", Tiflis, 1877, hunisi 27 (hulisi 9), tiv 46. (in Armenian)
"Mshak", Tiflis, 1877, hunisi 30 (hulisi 12), tiv 47. (in Armenian)
"Mshak", Tiflis, 1878, hunvari 18 (30), tiv 3. (in Armenian)
Poghisyan S. 2008, Hayots´ ts´eghaspanutyan patmautyun, h. 1, Yereva, (in Armenian)
Sarukhan, 1912, Haykakan khndirn yev Azgayin sahmanadrutyuny Tiurkiayum, (1860-1910), h. A., Tiflis. (in Armenian)
Vaveragrer Hay ekeghets´u patmutean, 2002, girk zh, Past´at´ghteri yev niut´eri zhoghovadzu, Kazmogh` S. A. Behbudean, Yerevan. (in Armenian)
P´ordz, Tpghis, 1877/1878, tiv 1. (in Armenian)
P´ordz, Tpghis, 1877/1878, tiv 4. (in Armenian)
Vinigradov V. 2005, Balkanskaya epopeja knjaza A. M. Gorchakova, Moskva. (in Russian)
San-Stefano, Zapiski gh. N. P. Ignat'tva s primechenijami A.A. Bishmakova i K. A. Gubastova, 1915, **"Istoricheskij Vestnik",** Aprel', t. 140. (in Russian)
Marriot J. 1917, The Eastern Question. Historical Study in European Diplomacy, Oxford, Clarendon Press. (in English)
Reed C., 2016, Disraeli and the Eastern Question: Defending British Interests, Tenor of Our Times, Vol. 5, p. 17-38. (in English)